ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 մարտի 2015թ. թիվ 100-Ա

«ԱՐԵՎԱՇՈՂԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ՆՎԱԶԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի ԹԻՎ 329-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետի, 67-րդ հոդվածի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերի, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի հունվարի 15-ի N 41-Ա որոշման 1-ին կետի՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «Արևաշողի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության 510000 ՀՀ դրամ կազմող կանոնադրական կապիտալը նվազեցնել 500000 ՀՀ դրամով՝ բաժնետոմսերի հետգնման և մարման միջոցով: Նվազեցումից հետո կանոնադրական կապիտալը սահմանել 10000 ՀՀ դրամ:

2. Հաստատել կանոնադրության փոփոխությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2007 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 329-Ա որոշմամբ հաստատված «Արևաշողի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրության 4.2 կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 10000 ՀՀ դրամ, որը կազմում է 1 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 10000 ՀՀ դրամ:

Ընկերության կողմից թողարկված 1 հատ բաժնետոմսը տեղաբաշխված է, սեփականության իրավունքով պատկանում է Հայաստանի Հանրապետությանը և լրիվ վճարված է նրա կողմից»:

Ընկերության բոլոր բաժնետոմսերը հասարակ (սովորական) են»:

3. Հանձնարարել «Արևաշողի առողջության առաջնային պահպանման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրենին՝ դիմել պետական ռեգիստրի գործակալություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պետական գրանցման համար:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Սամվել Լամբարյանին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. մարտի 31
ք.Վանաձոր